

Մուսեղ Նարյան

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ԵՎ ՇՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Մեր ազգային մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի գրականագիտական-բանասիրական ուսումնասիրությունների, ինչպես նաև գրական-հասագրական գործունեության մեջ ուրույն տեղ է գրավում Սայաթ-Նովան, Հանձարեղ գուսանի ողբերգական կյանքի էջերը, այնքան ջերմաշունչ ժողովրդական երգերը տարիներ շարունակ, դեռ մանկությունից հուզել են բանաստեղծին, եղել նրա գուրգուրանքի, սիրո և ուսումնասիրության առարկան, Թումանյանը նրա մեջ տեսել է խտացումը հայության՝ հայի գեղարվեստական, մարդասեր հանճարը՝ մի կողմից և այդ հանճարի ծանր, գերմարդկային ծանր վիճակը՝ մյուս կողմից: Եվ խորապես ճիշտ գնահատելով գուսանի սքանչելի խաղերի դերը կուլկասի ազգերի եղբայրության մեջ, ջանացել է հնարավոր ամեն ինչ անել այդ երգերն իսկապես ամեն մեկի սեփականությունը դարձնելու, նրանց գեղարվեստական կախարդանքը բացահայտելու համար: Սայաթ-Նովային չի կարելի վայելել ոչ կերպ, քան միայն ճանաչելով, հասկանալով: Նա այն մեծություններից է, որոնք նման են ազամանդի, ուշ են հղկվում (ընկալման իմաստով), բայց և հղկվելուց հետո չեն խաթարվում: Նա մի ուրույն, խիստ ինքնատիպ, հույսկալ գեմք է՝ թե՛ իր քառալեզու երգերով, թե՛ այդ երգերի բառահենքով, թե՛ արդեն երկու դար առաջ անցած-գնացած յուրահատուկ կյանքի խիստ գունեղ վերարտադրությամբ:

Այս ամենը Հ. Թումանյանն ընկալել է մեծ բանաստեղծի զգացմունքով և գիտնական բանասերի խորությամբ: Նա հսկայական ջանք է թափել տարիներ շարունակ, որ գուսանի երգերը տարածվեն, ճիշտ հասկացվեն, ճիշտ թարգմանվեն, որ մեզանում, ինչպես նա է երազել, իր ամբողջ փայլով ու փառքով վերակենդանանա ժողովուրդների ևղբայրության հանճարեղ երգիչը, Արևելքի միակ քառալեզու մեծ աշուղը: Եվ ջանք է թափել դեռ աշակերտական սեղանից, բնազդով, տարերային մղումով, իսկ այրական հասակում՝ միանգամայն գիտակից կերպով:

Թերթենք այդ գեղեցիկ էջերը:

Պատանեկան տարիներին, գրում է բանաստեղծի գուստրը՝ գրականագետ Նվարդը, 1881—1883 թթ., Թումանյանը, երբ դեռևս երկրորդ դասարանի աշակերտ էր Ջալալօղլու (այժմ՝ Ստեփանավան) դպրոցում, «Քնար հայկականի» լջերում կարդում է Սայաթ-Նովայի երգերը, կարդում է, սիրում և իր ընկերների համար Թիֆլիսի բարբառից վերածում գրականի: «Քնար հայկականում» տպագրվել էին Ախվերդյանի «աղանավոր և պոետական»² գրքից, նրա կազմած ծանոթագրություններով, հետևյալ խաղերը՝ «Ուստի դու քաս», «Դուն էն

1 Հ. Թումանյան, Սայաթ-Նովա, էջ 65, Երևան, 1945:

2 «Քնար հայկական», խմբագրեց Մ. Մխանարյանց, էջ ԺԴ. Պետերբուրգ, 1868:

գլխեն իմաստուն իս», «Արի ինձ ամբաճ կալ», «Առանց քիչ ի՞նչ կոնիմ», «Արի համով ղուլուղ արա», «Բըլբուլի հիդ լաց իս էլի» — ընդամենը վեց խաղ³։

Անցնում են տարիներ, նույն տեղերը մնում է բանաստեղծի սրտում, միայն թե ավելի զորեղանում է, իմաստավորվում։ Նթե առաջ բնագրով էր հասկանում երգչին, ապա այժմ՝ ազգային բանաստեղծի ոգով ու իմաստությունով։ Նրան հետաքրքրում է երգչի հետ կապված ամեն ինչ, նվ որքան է ուրախանում, երբ 1901 թ. Ախալցխայի շրջանի Ուրալել գյուղում կազդուրվելիս, սար ու ձոր թափառելիս, ժողովրդական նյութեր հավաքելիս, իմանում է, որ մոտիկ գյուղում մի աշուղ կա։ «Բերել տվի, խոսեցրի, շատ բաներ չէր իմանում, միայն իմացածների մեջը նշանաւորը Սայաթ-Նովայի թուրքերեն մի երգն էր, «որ ահա դրկում եմ քեզ», — պատմում է նա 1901 թ. հուլիսին Ուրալելից Փիլիպոս Վարդազարյանին գրած նամակում, ու բերում Լրգի բնագիրը, որ տարիներ անց թարգմանեց Մ. Հասրաթյանը.

Տեր իմ հըղոր, ուզածըս այս է քեզնից՝
Անցած օրերիս նըման օրըս լինէր,
Հին, հայրական դուլաթը ետ գար նորից,
Մարդարիտե հագնելու շորըս լիներ։

Ութսուն հալար ասուետներըս իջնեին,
Ութսուն հալար ելներ շշի քաշեին,
Մասիս սարի չափ փլավըս ճաշեին,
Արագի նման վարար յուղըս լիներ։

Թե հարցընեք տեղըս՝ կասեմ՝ Հերաթն է,
Հայրըս Հիդայաթն է, մայրըս՝ Հիմմաթն է.
Ցեղըս Զսոդդուլայի, ինքըս՝ Սայաթն եմ,
Ողորմություն՝ հացըս ու յսղըս լիներ⁴։

Շուրջ երեսուն տարի հետո, երբ իր իսկ նախաձեռնությամբ Հայ գրողների կովկասյան ընկերությունը 1914 թ. հրատարակում է երգչի ժողովածուն, գրավրա էլ մշակում է իր վաղեմի թարգմանությունները, Հ. Թումանյանի թարգմանական այդ փորձերի առարկան են դառնում «Ամեն սազի մեջըն գոված», «Արի ինձ անգաճ կալ», «Մե խոսկ ունիմ իլթիմալուլ», «Դուն էն գլխեն իմաստուն իս», «Ինձ ու իմ սիրեկան յարին», «Էլսչն վառ կրակ է» երգերը։ Դրեթև նույն ժամանակ նա խոստացել է տալ Շեքսպիրի սոնետների և մեծ գուսանի երգերի համեմատությունը «Մի ուրիշ անգամ ցույց եմ տալու, թե ինչքան նման գծեր կան Շեքսպիրի սոնետների ու Սայաթ-Նովայի երգերի մեջ», — խոստացել է նա, բայց, ցավոք սրտի, անկատար թողել։ Թեև ուղ այս մի հատիկ փորձը գալիս է ասելու, որ Թումանյանի աչքում Սայաթ-Նովան այնպիսի մեծություն էր, որին կարելի էր համեմատել Շեքսպիրի նման համաշխարհային մեծության հետ, մի բան, որ տարիներ անց, շատ ավելորեն ու ջերմորեն կատարեց Վալերի Բրյուսովը։

³ Նույն տեղում, էջ 452—461։

⁴ Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատոր 5-րդ, էջ 185—187։

Հարազատի սիրով է Թումանյանը սիրել Սայաթ-Նովային: Նրա երգերն իր համար եղել են սրտալի, դրանք ոչ միայն ուսումնասիրել է, հիացել ու տա-
րածել, այլև միշտ երգել է մի սրտաբուխ ջերմությամբ: Նաև արդեն հիսնամ-
յակը թեակոխած շրջանում, երբ ճանաչված ժողովրդական բանաստեղծ էր,
ժողովրդի մարդուն վայել անմիջականությամբ Թիֆլիսում Սայաթ-Նովային
նվիրված գրական-երաժշտական երեկոյին հանդես է եկել թե՛ իբրև բացման
խոսք ասող, թե՛ իբրև ասմունքող արտասանող, գրական-երաժշտական բաժ-
նում արտասանել նրա «Մե խոսկ ունիմ իլթիմադով» բանաստեղծությունը:
Սայաթ-Նովային Թումանյանը նվիրել է և մի գողտրիկ բանաստեղծություն՝
«Խաղով եկավ, ախով գնաց Սայաթ-Նովան»: Զարմանալի բնորությամբ բա-
ռերի, ընդամենը մի քանի տողով, ասես թե մարմարից հյուսել է ինչքան որ
բարեհնչուն, նույնքան էլ խիստ բնորոշ մի երգ: Հակադրության մեջ են դրված
երկու հիմնական, Սայաթ-Նովային բնորոշ հանգամանքներ՝ խաղն ու ախը,
երգն ու վերքը, սերն ու սուրը: Աշխարհ գալիս գուսանը բերում է խաղ, երգ,
բայց հառաչելով՝ ախ քաշելով է գնում՝ անմուրադ: Երկրորդ երկտողն ավելի է
ուժեղացնում զգացմունքը. հառաչանքը վերք է ծնում. երգիչը երգով գալիս ու
վերք է ստանում աշխարհում: Այս էլ քիչ է. սիրով, սեր երգելով գալիս, սեր է
երգում ու սրով է գնում: Հոյակապ է վերջնատողը՝ սիրով մնաց Սայաթ-Նովան,
որ նշանակում է՝ սիրակարոտ ու սիրելի մնաց: Այդ բանաստեղծությունը նա
1913 թվականի ապրիլին առաջին անգամ արտասանել է Հայ գրողների ընկե-
րության նախաձեռնությամբ Սայաթ-Նովային նվիրված առաջին երեկոյին,
որտեղ և բանախոսել է նույն նյութի շուրջը:

Թումանյանն ամեն ինչ արել է բանաստեղծի ջերմությամբ և գիտնա-
կանի խորամտությամբ: Միշտ՝ բոլորի հետ, հավաքական ուժերով, ժամա-
նակի մամուլում տպագրված այն լուրերին, թե Թումանյանի «առանձնակի
ջանքերի» շնորհիվ է գլուխ եկել Սայաթ-Նովայի արձանը, պատասխանել է՝
«Գալով իմ «առանձնակի ջանքերին», պետք է ասեմ, որ ինչ որ կատարվել է,
կատարվել է հավաքական ջանքերով»: Նա «միանգամայն ավելորդ է» որակում
ոմանց այն ցանկությունը, որ երգչի արձանի վրա փորագրվի իր վերոհիշյալ
բանաստեղծությունը: Եվ ասում է, որ «հենց Սայաթ-Նովայի իրեն երգերից մի
երկու տող կգրվի իր արձանի վրա»: «Սայաթ-Նովայի շիրիմը» խորագրով իր
առաջին հոգվածում Թումանյանը 1912 թվականի նոյեմբերին իբրև բնաբան
մեջ էր բերել երգչի ինքնաճանաչությունը բնորոշող տողերը՝

Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրըն ուրիշ գրերն է,
Թունյաթըս ավաղ չիմանաս՝ քարավի է, քարուկերուն է...

Քանդակել են տալիս արձանի վրա մեծ երգչի տողերը.

Ամեն մարթ չի կանա խրմի՝ իմ ջուրըն ուրիշ ջրերն է.

Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրըն ուրիշ գրերն է.

Թունյաթըս ավաղ չիմանաս՝ քարավի է, քարուկերեն է:

Սայաթ-Նովայի վերածնության հետ կապված ամեն մի կազմակերպական
քայլի նա տալիս է պատշաճ երանգ ու ծավալ, միշտ ձգտում է արժանին անել:

5 Թունյաթը կամ Թունյաթը շենքի հիմքն է, Պետք է երգի մեջ գրել Թունյաթ, որ երկու վանկ
է և ոչ լուսնիաթ, որ երեք վանկ է և խախտում է չափը:

ասես ջանալով հատուցել այն ծանր վիշտը, որ հանճարի գերեզմանը ավելի քան մեկ դար արժանի շիրմաքար չունենր... Մթնոլորտն էլ շարունակ նույնն է՝ ջերմ, միջազգայնական՝ իսկը սայաթնույլան, արվեստի ու գրականության, բանաստեղծության ու երգի ազնիվ հնչյուններով լի։ Համերգների ու գրական երեկոների ջերմասիրտ. ոգին ու կազմակերպիչը լինելով, ժամանակի բոլոր լավագույն աշուղներին ու գրական ուժերին մղում է տալիս, գործի մեջ քաշում՝ հանուն Սայաթ-Նովայի մեծության բացահայտման։ Հայը, վրացին, ադրբեջանցին եղբայրական սիրով ևն ընդունում իրենց հարազատ երգչի նոր և ներդաշնակությունը, ասես թե ուշքի են գալիս և բնական լույսով տեսնում նրա այն արտակարգ մեծությունը, որ մինչ այդ լավ չէին նկատում...

Այսպես ծավալվում, մեծանում է կովկասի մեծ երգչի փառքը, հասնում հայաշատ կենտրոններ ու համազգային նոր դույն ստանում։ Ծայր է առնում մի պայծառ սեր դեպի Սայաթ-Նովան, նրա երգերը հնչում ևն ընտանեկան հարկի տակ ու հանդեսներում՝ Թիֆլիսից մինչև Մոսկվա, Բաքու, մինչև Գյումրի ու Երևան, Ղարս ու Վան... Իր որդուն՝ Արտավազդ Թումանյանին գրած նամակում բանաստեղծը հաղորդում է. «Մեր գրական երեկույթներն էլ շատ լավ են գնում»։ Ապա՝ «Մենք ամենքս լավ ենք։ Երեխաները Սայաթ-Նովա են երգում»։ Նույն թվականին նամակ է գրում և Բաքու, բանաստեղծ Հովհաննես Կոստանյանին. «Սիրելի բարեկամս ու. Հովհաննես. գալիս է մեր աշուղ Հազրին իր խմբով Սայաթ-Նովայի երեկույթի համար։ Հավատացած ևմ, որ գոհ պիտի մնաք ու նրանց էլ գոհ պիտի ճանապարհ դնեք»⁶։ Հետևելով ուղարկում է նաև Ախվերդյանի տույած Սայաթ-Նովայի վերջին օրինակները, որ վաճառեն։

Սրանք են այսպիսի ասած գրական-երաժշտական կազմակերպական քայլերը։

Բայց մի առանձին նշանակություն ունեն Թումանյանի գրականագիտական-սայաթնուլագիտական քայլերը։ Այդ տարիներին՝ 1911—1916 թվականներին է նա գրում իր այն հոդվածներն ու ուսումնասիրությունները, որոնցով դառնում է սայաթնուլագիտության երկրորդ դեմքը՝ միշտ աճող ու հարգելի Գևորգ Ախվերդյանից հետո։ Իբրև բանասեր, նա սկսում է Սայաթ-Նովայով զբաղվել Ախվերդյանի կազմած գրքի լույս աշխարհ գալուց կես դար հետո՝ 1911 թ.։ Այդ բուռն ավյունը տևում է մինչև 1916 թ.։ Հիշյալ տարիներից հետո էլ նա այս կամ այն առիթով անդրադարձել է գուսանին, սակայն իր սայաթ-նուլագիտական հիմնական գործերը գրել է այդ ժամանակ, երբ հրապարակ էին և կել նրա արձանի բացման, գրքի նոր հրատարակության, ապա և ողեսերեն թարգմանության խնդիրները։ Այս բոլոր ասպարեզներում էլ նա ամուրանալի մեծ գործ է կատարում, որով և զարկ է տալիս Սայաթ-Նովայի երգերի տարածմանը, սայաթնուլագիտության ծավալմանն ու խորացմանը։

Սայաթ-Նովային նվիրված հոդվածներից մեկում, որ կոչվում է «Սայաթ-Նովայի շիրիմը»⁷, գուսանը Թումանյանի համար «սեփական երգիչ է», «էսքան հոյակապ մի տաղանդ, էսքան խորունկ մի հոգի, էսքան ազնիվ ու կենդանի մի սիրտ»։ Ու ցավ է հայտնում, որ նման մեծությունը ունի «...էսքան մոռացված մի գերեզման»։ «Հայոց նորաբաց Կրական ընկերությունը, — ասում է նա, —

6 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատոր 5-րդ, էջ 293.

7 Նույն տեղում, էջ 391.

8 Հ. Թումանյան, Սայաթ-Նովա, էջ 7—8.

որոշել է մոտիկ առաջիկայում կազմակերպել հատուկ Սայաթ-Նովային նվիր-
ված մի գրական-երաժշտական երեկո, և շիրիմի խնդիրն էլ էս անգամ կարգի
կդրվի»:

Ծրագրված մի երեկոն դառնում է երեկոների շարան՝ ու միշտ լեփեցում
դահլիճով, աննկարագրելի մակարդակով ու խանդավառությամբ: Գրողների
ըսկերություն կազմակերպած առաջին երեկոն տեղի է ունենում բավական նա-
խապատրաստելուց հետո, 1913 թ. մարտի 14-ին: Երեկոյի անսպասելի ըն-
դունելությունը թեալորում է Սայաթ-Նովայի սիրահարներին: Երեք շաբաթ
անց՝ ապրիլի 5-ին տեղի է ունենում նոր երեկո՝ ավելի շքեղ ու ճոխ, ավելի
ծավալուն, որ շտեմնված ընդունելություն է գտնում: Կրկնվում է մայիսի 25-ին:
Նոր երեկույթը բացվում է Հ. Թումանյանի կաթճառոտ խոսքով:

Ասյա նման երեկոներ են կազմակերպվում ուրիշ քաղաքներում:

Հ. Թումանյանը Սայաթ-Նովային դիտում է ժողովրդի այդ կենդանի սիրո
ու պաշտամունքի ֆոնի վրա, պատմական ժամանակի մեջ, Թիֆլիսածնունդ
հայ մեծերի համաստեղության մեջ, իմաստավորում գրական, առաջին հաջ-
քից սովորական թվացող երեկոյթները: Նույն, 1913 թ. մարտին, երբ լրանում է
մյուս մեծ թիֆլիսեցու՝ Գարրիեկ Սունդուկյանի մահվան առաջին տարելիցը,
նա հանդես է գալիս «Երկու մեծ թիֆլիսեցիներ» հոդվածով⁹: Այնմիջակայ-
ն է տեսնում Գ. Սունդուկյանի ու երգչի միջև, որոնց համարում է Թիֆլիզի և հին
Թիֆլիզի մեծ ու հարազատ զավակները: Այն Թիֆլիզի, որը «մի առանձին ինք-
նուրույն աշխարհք ու զվարթ կյանք էր ներկայացնում իր համ ու հոտով, լեզ-
վով ու աղաթով, աղ ու հացով, նիստ ու կացով»: Նույն Թիֆլիզը «հայոց գրա-
կանությանն էլ երկու մեծ անուն է թողել՝ Սայաթ-Նովա և Գարրիեկ Սունդուկ-
յան: Հարազատ Թիֆլիզի լեզվով, Թիֆլիզի շնչով, Թիֆլիզի հոգով»:

Այս ինքնատիպ կյանքը շատ էր խոսում Թումանյանի հոգու հետ, որը
ստիպված էր ցավով արձանագրելու, թե «կորչում է ժողովուրդների անհատա-
կանությունը, առանձին ոգին, սեփական գույնն ու երանգը»: Այսինքն «էն
ամենը, որ էնքան բնական են, ինչքան նրանց երկրի կլիման ու բնությունը
և ինչու որ նրանք կենդանի են, գեղեցիկ են, մեծ են»: Ու պատգամում է իր
ժամանակի գրողներին՝ հետևել երկու մեծ թիֆլիզեցիներին, կապվել հողին
ու ջրին, հայրենի երկրին ու ժողովուրդին, քանի որ այդ է իսկական մեծ ար-
վեստի ստեղծման ճանապարհը, քանի որ ամեն ուժ, ասում է նա, սնունդ է
առնում, զարգանում ու մեծանում է իր հարազատ կլիմայի մեջ: Ու ինչքան էլ
մեծանա, թեկուզ զլուխն էլ Լրկինք հասնի ու աշխարհքն առնի իր հովանու
տակ, միշտ ոտը դրած է մի հողի վրա, ու էդ հողն իր հարազատ հողն է, իր
հարազատ աշխարհքն է: Ու կոչ է անում՝ օգնել Սայաթ-Նովայի արձանի կա-
ռուցմանը, հարգանք տածել նրա նկատմամբ:

Ամիս առ ամիս, օր առ օր Թումանյանը ընթացք է տալիս ժողովրդական
տեղախմբություններին, օգնում Սայաթ-Նովայի վերակենդանությանը, Կով-
կասի ազգերի դարավոր բարեկամությանը, երգչի խոր արվեստի կախարդական
զաղտնիքների բացահայտմանը:

Հիշյալ հոդվածից գրեթե մի ամիս անց Հ. Թումանյանը գրում է «Սայաթ-
Նովայի երգերի բնավորությունը»¹⁰ կոչ ուսումնասիրությունը, որի մեջ օգտա-

⁹ Նույն տեղում, էջ 7—8:

¹⁰ Նույն տեղում, էջ 11—16:

գործում է և նրա անտիպ աղբյուրներն խաղերը: Ու այդ ամենը՝ դարձյալ երգչի մեծության մեկնաբանության, բացահայտման համար: Պատասխանելով այն մարդկանց, որոնք, երեկոների փայլից շլացած, կարծում էին, թե մոդա է, դրա համար են գրեթե բոլորը վազում, և որ այդ մոդան էլ ամեն մի մոդայի նման շուտով կանցնի, Թումանյանը հաստատու համոզված ասում է. «Ինչքան են սխալվում էս տեսակ մարդիկ, ի՞նչ անծանոթություն Սայաթ-Նովայի հետ, ի՞նչ թեթև կարծիք նրա մեծ տաղանդի ու ստեղծագործության վրա: Ո՛չ, նա մի նորօրինակ ձև չի, որ ժամանակի ընթացքում ձանձրացնի ու փոխվի: Նրան միև լսողը երկրորդ անգամ լսելիս ավելի պիտի սիրի, և մին հասկանալուց ու սիրելուց հետո երբեք չպիտի մոռանա»:

Ու բացատրում, մեկնաբանում է նրա արվեստի ժողովրդական վճիռակունքները, նրա սրտի ջերմությունը, նրա ազնիվ ու լիքը սիրտը, հարադատ շունչը: «Մեր վիթխարի Սայաթ-Նովան,— եզրակացնում է բանաստեղծը, իրեն հատուկ գունագեղ շնչով,— սրի է ու բարի, անշար ու անաշառ, վեհ ու վսեմ, որպես աշխարհի ու մարդու մեծ բարեկամը: Իսկապես, կոս՝ արդյոք ստեղծագործողի համար ավելի մեծ տենչանք, ավելի մեծ փափագ: Առհասարակ նրա երգերում քիչ երևակայություն կա, շատ զգացմունք, որը նրա խաղերում արտահայտում է մեծ մասամբ էնքան մեղմ ու անվրդով խաղաղություն: Նրա երգերի պայծառ պարզության մեջ,— շեշտում է Թումանյանը Սայաթ-Նովայի երգերի բնավորության գծերից մեկը— ավաշկարա երևում է գուսանի բարի, քնքուշ սիրտը ու ազնիվ, խորը հոգին, և էդ ամենը միանգամայն առողջ ու ամբողջական: Նա մի առողջ, ոգևորված բանաստեղծ է, որ աշխարհք է մտել սազով ու սիրով, աշխարհքն ու մարդուն, աշխարհքի դեղեցկությունն ու վայելքը, մարդու ազնվությունը երգելու»:

Մրազրված գրական-երաժշտական մեկ երեկոյի նման, որ դարձավ հարյուր ու մեկ, չտեսնված հաջողություն զտան նաև նոր հրատարակված ժողովածուն և արձանի կառուցման խնդիրը: Այդ ժամանակ էլ երգչի ժառանգներից ձեռք բերված Սայաթ-Նովայի ձեռագիր դավթարը դարձավ դրողների ընկերության սեփականությունը, իսկ այժմ գտնվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի գրականության ու արվեստի թանգարանում, հայ ժողովրդի սեփականությունն է: Այն Հ. Թումանյանի մոտ մնաց մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը, երբ նա պատշաճ կերպով դավթարը հանձնեց Հայաստանի նորաստեղծ գրական թանգարանին:

1914 թվականն անցնում է Սայաթ-Նովայի արձանի բացման և տաղարանի նոր հրատարակության հոգսերով:

Սայաթ-Նովայի հետ կապված ոչ մի բան չի վրիպում Թումանյանի աչքից: Սայաթ-Նովայի անդամ գերեզմանը նրա համար միշտ կենդանի գերեզման է, և «կենդանությունը՝ պայծառ, քնքուշ ու ազնիվ»:

Գրական լուրջ արժեք են ներկայացնում նրա հետագա տարիների ուսումնասիրությունները, որոնք հիմնականում նվիրված են շատ խաղերի ոճերի ու բառերի վերլուծություններին, նման բառերի ուսերեն թարգմանությունների ճշտմանը: Թումանյանը բանավեճի է բռնվում շատերի հետ, առաջ քաշում միանգամայն ինքնուրույն, համոզիչ փաստեր ու մեկնաբանություններ, մերժում, հերքում շատ սխալ, անհիմն բացատրություններ, դիմում մինչև անգամ հնդկերենի բառարանին՝ հանում Սայաթ-Նովայի արևային մեծության ճիշտ

ընկալման: Մասնավորապես նման կարգի ուսումնասիրություններում Թումանյանը ցուցաբերում է բանավիճողի կուռ տրամաբանություն և փայլուն սրամտություն, անսպառ էրուդիցիա: Թումանյանը գրել է այս կարգի մի քանի հոդված, որոնցից, իբրև սայաթնովագիտական պրոբլեմներ արծարծող և լուծող, աչքի են ընկնում հետևյալ ուսումնասիրությունները՝ «Քուչակ Նահապետի և Սայաթ-Նովայի ռուսերեն թարգմանությունների առիթով» (1915)¹¹, «Գրական նկատողություններ» (1916)¹², «Поэзия Армении» գրքի երկրորդ տպագրության առթիվ» (1917)¹³:

Թումանյանը, որ մարմնացած կյանք էր ու եռանդ, այստեղ էլ կոխնում է հարակենդան, բաբախուն կյանքին: Դրդում է, մղում տալիս, որ լույս ընծայեն Սայաթ-Նովայի մինչ այդ անտիպ մնացած վրացերեն խաղերը: 1914 թ. Լիսիֆ Գրիշաշվիլին Թումանյանի խորհրդով ձեռնամուխ է լինում վրացերեն խաղերի հրատարակությանը, որը և գլուխ է բերում շորս տարվա մեծ ջանքով: «Այս բնագավառում իմ աշխատանքը շատ դժվար կլիներ, եթե ինձ չօժանդակեին ակադեմիկոս Ն. Մառը, նկարիչ Գ. Բաշինջաղյանը և մասնավորապես Հովհաննես Թումանյանը,—ասում է վրաց ականավոր բանաստեղծն ու գիտնականը:—Որևէ դժվարության դեպքում ինձ օգնության էր գալիս Հովհաննես Թումանյանի մեծ էրուդիցիան: Բարձրանում էի նախկին Վոդնեսենսկայա փողոցը, զգույշ թակում էի դուռը, նրա աղջիկ նվարին ինձ ուղեկցում էր հոր մոտ, և նա էլ իր սովորական ժպիտով,—այն ժպիտը մի բանաստեղծություն արժեք,—հարցուփորձ էր անում, թե ինչպես է ընթանում իմ աշխատանքը:

Ահա այսպես մոտեցրեց ինձ Սայաթ-Նովան Հովհաննեսին»:

Նման աշխատանք նա կատարում է և Վալերի Բրյուսովի հետ: 1915 թ. հունվարին առաջին անգամ Թիֆլիզ է գալիս «Հայաստանի բանաստեղծություն» ծաղկաքաղի գործով ռուս նշանավոր բանասեր ու բանաստեղծ Վալերի Բրյուսովը: Թումանյանի անձնական մտերմությունը շատ է ջերմացնում միմյուրտը: Բանաստեղծը կազմակերպում է գրական երեկոներ, նվիրված թե՛ Սայաթ-Նովային, թե՛ հայ միջնադարյան բանաստեղծությանը, թե՛ ռուս բանաստեղծին: Նրանք միասին այցելության են գնում Սայաթ-Նովայի գերեզմանին և հին Թիֆլիզի թաղերը ու շարունակ գրուցում հայկական պոեզիայից ու իրենց սիրած Սայաթ-Նովայից: Վ. Բրյուսովը Թումանյանի նման իրոք երկրպագում էր Սայաթ-Նովային, որի յուրաքանչյուր բառն ու նախադասությունը ուսումնասիրության, հիացմունքի առարկա էր նրա համար: Պատկառելի բանաստեղծը սքանչանում է Հ. Թումանյանով, նրա բանասիրական մեծակշիռ խորությամբ: Եվ Սայաթ-Նովայի անվան Թումանյանի տված մեկնաբանությունը համապատասխան հիշատակությամբ տալիս է «Հայաստանի բանաստեղծություն» գրքի հոյակապ առաջաբանում¹⁴: Այս մասին Հ. Թումանյանն ինքը գրել է. «պ. Բրյուսովի Թիֆլիս եկած ժամանակը, երբ ինձ մոտ էին, խոսք բացվեց Սայաթ-Նովայի անվան վրա, և ես հայտնեցի իմ կարծիքը, թե Սայաթ-Նովա

¹¹ Նույն տեղում, էջ 18—25:

¹² Նույն տեղում, էջ 27—30:

¹³ Նույն տեղում, էջ 30—39:

¹⁴ «Поэзия Армении с древнейших времен до наших дней». Под редакцией со вступительным очерком и примечаниями Валерия Брюсова. стр. 60, Москва, 1916.

կնշանակի երգի, երաժշտության տեր, իշխան, և բաց արի, ցույց տվի հնդկական բառարանը, ուր ասված է՝ Սայադ—տեր, իշխան. նույն, որի արարերենն է նույն կամ նեվա=մելոդիա, երաժշտություն, ներդաշնակություն, նվագածություն, որից և մեր նվագն է կամ նվագածությունը»¹⁵:

Այսպես էր Թումանյանը խոսքով ու զործով բարձրացնում, վեր հանում Սայաթ-Նովայի մեծությունը, այն դարձնում ժողովուրդների սիրո և գրականության, արվեստի ու երաժշտության փոխադարձ վայելքի, հաղորդակցության մի զորեղ միջոց:

Այժմ գանք նրա վերոհիշյալ երեք ուսումնասիրություններին, որոնք միևնույն ժամանակում են գրավում իր սայաթնովագիտական ուսումնասիրությունների մեջ:

1915 թ. սեպտեմբերին «Русская мысль» հանդեսում տպագրվում են Նահապետ Քուչակի և Սայաթ-Նովայի մի քանի բանաստեղծությունները Վ. Բրյուսովի թարգմանությամբ: Միանգամայն ջերմորեն խոսելով «ռուս ականավոր բանաստեղծի» և «ազնիվ թարգմանչի» ու նրա աջակիցների գործի մասին, Թումանյանը ցանկություն է հայտնում մի քանի դիտողություններ առաջարկել թե՛ Քուչակի, թե՛ Սայաթ-Նովայի երգերի բնագրերի սղագրական և բացատրական ինչ-ինչ սխալների ու մոթ տեղերի վրա և ղեկավարել, քանի դեռ գործի սկիզբն է: Գուցե թե ավելի զգուշավոր վերաբերմունքով ավելի շատ կարողանան խուսափել ակամա սխալներից: Պատրաստվում էր «Հայաստանի բանաստեղծությունը» մեծ ծաղկաբալը, այդ թարգմանությունները մտնելու էին նրա մեջ: Ուստի և Թումանյանը ջանում է կանխել տալ «ակամա սխալները»: Անձամբ ծանոթ լինելով Վ. Բրյուսովին և ծաղկաբաղի նշանավոր մյուս բանաստեղծ թարգմանիչներին, Թումանյանը դիտեր. որ նրանք բնավ հայերեն չէին իմանում, ուստի և նրանց աշխատանքը շատ էր բարդանում: Նրանք ստանում էին միայն տողացի թարգմանությունը, որը և վարպետորեն բանաստեղծացնում էին, «աշխատելով հաղթել գրեթե անհաղթելի արգելքների և, ինչպես Սայաթ-Նովայի, այնպես էլ Նահապետ Քուչակի երգերը տալ ռուսերեն, խորապես ճանաչելով նրանց մեծությունը և ինքնուրույն շունչն ու երանգը, և նրանց գործերն անվանելով հայ ժողովրդի աղնվականության վկայական»: Նման աշխատանքի պայմաններում հսկայական էր տողացի կամ բառացի թարգմանության գերը: Ահա թե ինչու բանաստեղծը շեշտը դնում է հայերեն բնագրերի, մասնավորապես Սայաթ-Նովայի ճիշտ ընկալման վրա, որը և ռուսերենի ճիշտ վերածման նախապայմանը պետք է լինի:

Խոսելով սալբի բառի վրա, որ ռուսերեն թարգմանված է նոնի, նա ասում է. ճիշտ է, սալբուն կիսարիսն է (նոնի), և էդպես էլ բացատրել է հանգուցյալ Ախվերդյանը, բայց սալբու փոխարևարար կնշանակի բարեկամ, վայելչահասակ, ուղղաձիգ: Խիստ արժեքավոր դիտողություն է անում «կրակի ծովի» մեն դուս էկած ուշ, ջեյիբան յս ինձ համա» տողի ուշի և ջեյիբանի մասին: Ռուսերեն թարգմանված էր.

О дочь огня! крылатый конь,
Степная лань ты для меня¹⁶.

15 Զ. Թումանյան, Սայաթ-Նովա, էջ 27—28:

16 Նույն տեղում, էջ 21:

Մինչդեռ, նկատում է բանաստեղծը, Սայաթ-Նովան ակնարկում է կովկասյան առասպելների, հեքիաթների հրեղեն ծովից դուրս եկած հրեղեն ձին ու հրեղեն ջեյրանը, այլ ոչ թե տավաստանի եղջերուն, ինչպես տրված էր ռուսերենում:

Սայաթ-Նովայի իսկապես կտիսարդական բառազանձի փառ, չրաղ, զալ, ֆալազ, նաւ բառերին տալիս է խիստ հետաքրքրական, հիմնականում ճիշտ մեկնաբանություն: Բե ինչ արժեք ունենալ այդ աշխատանքը, սլատկերացնենք միայն չրառ բառի թումանյանական ընկալմամբ ու մեկնաբանությամբ: Ժամանակի որոշ բանասերներ բառի միայն մի առումն էին նկատի ունենում՝ նրա: Մոռանում էին դեռ Ախվերդյանի տված մյուս էական երանգը: Եվ ռուսերեն հետևյալ կերպ էր հնչում բնագրի այդ բառը:

Հենց իմացիր, յար, քու դուլ իմ,

Բանգ ցնով գրնած չրաղ իմ:

Притчи меня к своим рабам,

Верь, что твоя лампада я¹⁷.

Լսենք խորատես և խորազգա Թումանյանին. «էստեղ չրաղը лампада չրնալ ճրագի նշանակություն չունի: Ախվերդյանը, ճիշտ է, բացատրություններ է մեջ գրել է ճրագ, բայց նշանակել է և բառի երկրորդ նշանակությունը՝ թե մեկի չրաղը էն մարդն է, որին նա նվաստ վիճակից առաջ է քաշում, սլահսլանում ու մարդ շինում: Սայաթ-Նովեն էլ իր յարին ասում է՝ հաշվիր, թե դու ես ինձ մարդ շինել, թե ոչնչությունից քո ստեղծած մարդն եմ ու «թող դռանդ ընկած ըլիմ...»¹⁸:

Իհարկե, հարում է Թումանյանը, գործն արել են շատ բարեխիղճ մարդիկ, բայց սխալներ ու վրիպումներ կան: Իմ նկատածներից եթե ոչ բոլորը, գոնե «էս կամ էն նկատողությունը կարող են ճշմարիտ լինել, և դարձյալ ես հասած կլինեմ իմ առաջադրած նպատակին»: Իսկ նպատակն այն էր, որ Սայաթ-Նովա իր ու նրա նմանների գործերի բառացի թարգմանությունները ռուս բանաստեղծներին տան շատ զգուշալիս ու ստուգված, մանավանդ որ «էսքան մեծ արժեք ու նշանակություն ունին էդ երգերը թե մեզ համար, թե օտարների աչքում, և գործի զուլս էլ կանգնած է հայտնի գործիչներից ընտրված մի հասարակական մարմին՝ Մոսկվայի հայկական կոմիտեն»:

Եվ եզրակացնում է, թե՝ այո, ճշմարիտ է, գեղեցիկ գրականությունը, իբրև հոգու սլարդ ու կատարյալ արտահայտություն, ժողովուրդների անխարդախ վկայականն է, և ինչքան բարձր է գրականությունը, միաժամանակ նաև բարձր հոգեկան կապ է ժողովուրդների մեջ:

Ահա թե ինչ տեսանկյունից էր Թումանյանը դիտում գրականությունն ու նրա առերևույթ մանր թվացող, բայց կուպես խիստ ծանրակշիռ հարցերը՝ բառերն ու ոճերը: Նույնանմանից էր, որ Սայաթ-Նովայի նման հանձարի ամեն մի բառը կատարյալ համարժեքով, փայլով ու փառքով շողար նաև ռուսերեն:

Խիստ ուսանելի են Թումանյանի բանասիրական-բանալեզվային եղանակները: Բացձակատ խոստովանում է իր վրիպումներն ու սխալները, բայց և իր հիմնավոր կարծիքները սլաշտալանում է հիմնավոր կերպով, փաստարկում է

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում:

գիտնականին վայել տոկունությունը ու տրամաբանությունը, անսպառ աղբյուրներից քաղած նյութերի իմաստավորությունը: Այս առումով հետաքրքրական և ուսանելի է խառ բառի մեկնաբանության պատմությունը: Նա դարձյալ Սայաթ-Նովայի թարգմանությունների առիթով գրել էր, թե «խառ, որ շատ հաճախ է գործածվում Սայաթ-Նովայի երգերի մեջ, էն բողոճն է, որ ուտում ու փչացնում է վարդը»: Պողոս Մակինցյանը 1916 թվականի դարնանը «Մշակում» «Գրական մանրութներ»¹⁹ խորագրով մի հոդված է տպում, առարկում բանաստեղծին: Վեճի առարկան լինում է գերազանցապես վերոհիշյալ բառը: Թումանյանը խոստովանում է, որ խառ բացատրել էր «առանց մյուս երգերը նայելու, թե որտեղ ինչպես է գործածած, տարածել էի էս մտքով ամենքի վրա, որից առաջացել էր վերև հիշված սխալը»: Ուրիշ խոսքով, ընդունում է, որ տեղ կա վարդի բողոճի իմաստն ոճի, տեղ կա՝ փշի:

Մակինցյանն առաջարկում է այլ մեկնաբանություն: Բերելով «նս բլբուլ եմ, վարդըս մընաց խարումըն» տողը, ասում է՝ այս «խառումըն բառը պետք է կարդալ խառուն, որ կնշմանակի իշին, այսինքն վարդըս մնաց իշին»:

Այս սխալ, Սայաթ-Նովայի նման խորապես նրբազգաց մեծությանը շատ զոռ մեկնաբանությունը զայրացնում է Թումանյանին: Նա գրում է՝ Մակինցյանը, խառը հասկանալով իբրև էշ, «ինքը շատ լուրջ կերպով մի էշ է բերում և հանդիսավոր կերպով տեղավորում է Սայաթ-Նովայի երգերից մեկի մեջ... և էշն էլ էստեղ պինդ կապում է»²⁰:

Կրթոտ բանավիճող բանաստեղծը արդարության կշեռքով է կշռում ինչպես իր սխալներն ու ճշմարտությունները, նույնպես և ուրիշներին: Ընդունելով, որ խառը, ըստ Մակինցյանի նոր մեկնաբանության, մասնավորապես «Շատ սիրուն իս, Շախաթայի» երգում պարսկերեն է, նշանակում է նաև անաբ, թշվառ, գրում է՝ «սա էլ է շատ հավանական: Սակայն Մակինցյանը պնդում է բավական ինքնավստահ կերպով, թե վարդի բողոճի իմաստով «ոչ մի տեղ խառ բառը գործ չի անված»: Ահա այստեղ է, որ Թումանյանը բացվում է: Նա «ամենայն քաղաքավարությամբ» խնդրում է Մակինցյանին իր էշը դուրս տանի Սայաթ-Նովայի վարդերի միջից, որովհետև հատկապես էստեղ խառը կնշմանակի փուշ, և բանաստեղծն ասում է՝ «վարդըս մնաց փշերի մեջ...»²¹: Ապա իր միտքը հաստատող մի քանի օրինակ է բերում Սայաթ-Նովայի այն երգերից, որտեղ բլբուլը մղկտում է, թե ման է գալիս խառերի հետ, այսինքն փշերի և ճիճուների: Բնական է, որ բլբուլը չէր կարող ման գալ... էշերի հետ, ինչպես ենթադրում էր Մակինցյանը: Թումանյանը դիմում է և «շատ լուրջ վկայության»:²² Աճառյա՛նի՝ «մեր հայտնի լեզվագետի» Գավառական բառարանում գրված է. «խառ. երևան: Տեսակ մը որդ, որ գլխավորապես վարդենիին վրա կգոյանա: (էմինյան ազգագրական ժողովածու, հատոր Թ, էջ 456)»²²: Ապա վկայակոչում է էջմիածնից ստացած մի նամակ, որի հեղինակը այդ բառի վերաբերյալ գրում է. «խառ... թեև վրա սև փայլուն բողոճն է, որ ցեցի պես ծակում մտնում է դեռ շրացված վարդի կոկոնի մեջ և փչացնում... Սոխակն էլ հետամտում է խառին, նրան որսալու, ուտելու համար... Դուք ուղիղ եք հասկացել»: Ու հարում է,

19 Պ. Մակինցյան. Գրական մանրութներ. «Մշակ», 1916, №№ 97—98.

20 Հ. Թումանյան, Սայաթ-Նովա, էջ 29.

41 Նույն տեղում:

22 Նույն տեղում:

թե նամակագիրը «նույնիսկ մի տուն թուրքերեն ոտանավոր է բերել, որ ցույց է տալիս, թե խարը փշացնող բոլորն է»:

Արդեն այստեղ Թումանյանը կատարելապես ճիշտ է՝ հենված բաղում աղբյուրների վրա:

Նույն կարգի նկատողություններ է անում և «Հայաստանի բանաստեղծությունը» գրքի հնարավոր երկրորդ տպագրության առթիվ: Սրտանց ողջունում է «ռուսաց գրեթե բոլոր առաջնակարգ բանաստեղծներին ու թարգմանիչներին»²³, որոնք մասնակցել են գրքին, որ մի «ղարկով ահագին գործ կատարվեց. մի գրքով միանգամից լայնածավալ շրջաններում առաջ եկավ ու հաստատվեց նոր վերաբերմունք»²⁴: Նրան այժմ էլ մտահոգում է այն թերությունը, որ «մեզանից՝ հայերից, հայ թարգմանիչներից են առևշ գալիս»²⁵: Այդ հանգամանքը, նկատում է Թումանյանը, կապված է այն բանի հետ, որ «մեր հին բանաստեղծության մեջ շատ բաներ ու ոճեր կան, որ մինչև էսօր մնում են մութն ու անհասկանալի, և կամ սխալ են մեկնած»: Այս պատճառով, ասում է նա, «շատ տեղ հենց ինքներս ենք թարգմանիչներին ձգել սխալների մեջ՝ էս տեսակ տեղերն ու տողերը սխալ թարգմանած նրանց ձեռքը տալով»²⁶: Ու բացատրում է նորից սալբու չինաբը, վկայություններ բերելով Աստվածաշնչից, Շոթա Ռուսթավելուց, կրակի ծովից դուրս եկած ռաշա ու չեչաբնը, իխտիարը, դանդը, բոյը, դարը, ջրատարը, յարը, բարը և շատ ու շատ նման բաներ ու ոճեր:

Հմուտ մեկնաբանությունները Թումանյանը եզրափակում է ժողովրդական գրողին վայել բացսիրտ խոստովանությամբ: «Իմ արած նկատողություններից շատերը մեզանում վիճելի են տակավին: Եթե ասում եմ՝ էս ինչ տեղը բար պետք է լինի, ոչ թե բառ, էդ հո չի նշանակիլ, թե հայոց բանասերներն ու գրողները իսկույն ևեթ ասելու են՝ աչքներին վրա. էդպես էլ կընդունենք»²⁷: Կարող մարդկանց ձեռքով սրբագրել գիրքը և ազատել այնպիսի սխալներից, որոնք միանգամայն փոխում են բանաստեղծության իմաստը, նսեմացնում «էս հոյակապ գործի արժեքը»²⁸ — ահա Թումանյանի առաջարկած ճանապարհը:

Թումանյանի նկատողությունների մի մասը հաշվի առան և մտքին «Հայաստանի բանաստեղծություն» գրքի մեջ: Այժմ քանի որ կարող էր առաջ գալ գրքի երկրորդ հրատարակության խնդիրը, ուստի և նա առաջ է քաշում թե նախկինում, թե նոր նկատած սխալները, ցույց տալիս, վերլուծում դրանք, համոզում իր կարծիքները, ջանք թափում հանուն հայ բանաստեղծության, հանուն Սայաթ-Նովայի անթերի ընկալման ու թարգմանության:

Անուրանալի է Թումանյանի սայաթնովագիտական վաստակը: Նա շոշափելի ներդրում կատարեց հանճարեղ երգչի ժառանգության արժեքավորման, թարգմանության գործում: Ավելորդ չի լինի ասել, որ դեռ տարիներ առաջ Սայաթ-Նովայի մասին նրա հայտնած շատ մտքեր սիրով ընդունեց և ռուս ընթերցողին հաղորդեց Վ. Բրյուսովի նման մի բարձր արվեստագետ ու գիտնական-բանաստեղծ: Մեր ազգային աղետի տարիներին էլ բանաստեղծը երգ է հյու-

23 Նույն տեղում, էջ 31:

24 Նույն տեղում:

25 Նույն տեղում:

26 Նույն տեղում:

27 Նույն տեղում, էջ 39:

28 Նույն տեղում:

սում Սայաթ-Նովայի ցավից ու սիրուց, որ այնքան նման էին մեր զարհուրելի սլաշմաններին: 1917 թ. վերջերին խոսում է այդ մասին.

Կանցնեն օրերն, Անուշ ջան,
Կանցնի քո հերն, Անուշ ջան,
Ու կըտաճի իրեն հետ
Իր ցավն ու սերն, Անուշ ջան:
Ցավը անտակ ծովի սկես,
Մերը՝ անհազ սովի սկես.
Ծովի միջին ու սովի
Անբախտ Սայաթ-Նովի սկես²⁹:

Հ. Թումանյանի ուսումնասիրություններն ու հոգվածները, ճառերն ու ղեկուցումները ինչքան որ գիտական են՝ կուռ, փաստերի վրա խարսխված, այդ փաստերը վերլուծող, ընդհանրացնող, նոր լույս սփռող, նույնքան էլ հաճելի են իբրև գրական գործեր: Շարադրանքի կենդանի շունչը, գեղեցիկ ու անմիջական լեզուն այն տալավորությունն են թույնում, որ ասես մարդ ոչ թե կարգում է գրականագիտական-բանասիրական գործ, այլ լսում է բազմափորձ, իմաստուն մի հարազատի, որը լեռնային օդի նման մաքուր ու թափանցիկ հոգով խոսում է մոլթն ու խրթին հարցերից՝ այնքան գրավիչ, մատչելի կերպով: Խոսում է Սայաթ-Նովայի արվեստից, համազդային, համամարդկային մեծությունից, նրա թե «գրական-սլաշմական, թե լեզվական»³⁰ մեծ հետաքրքրությունից: Ու կոչ է անում, դրդում՝ ծանոթանալ: Երբ մարդ նրան ծանոթանա, կսիրի:

Եվ ամեն մի ժողովուրդ, ասում է նա, սկսեք !, սիրի ու սլարծենա Սայաթ-Նովայի նման բանաստեղծով:

Հ. Թումանյանի մարգարեությունը կատարվում է:

29 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատոր տոաջին, էջ 534:

30 Հ. Թումանյան, Սայաթ-Նովա, էջ 43: